1548

ՀՐԱՀԱՆԳ

ՄՍՈՒՐԱՅԻՆ ՅԵՎ ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՈՂԵՐԻ ԾԻՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՄԱՑՂԱՇՆԵՐԻՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՈՒ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

636
Հ-99

ԳՅՈՒՂՇՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոզանոցներ 3
Խոզերի մաքրումը 4
Խոզերի ցամքարը 5
1. Մերուններին զրոսանքը 6
2. Հղի մերուններին կերակրումը 7
3. Ծնունդն ընդունելը 9
4. Ծծմայր մերուններին և խոճկորներին կերակրումն ու խնամքը 13
5. Խոճկորների լրացուցիչ կերակրումը 14
6. Խոճկորներին պահելն ու խնամելը 19
7. Անասնաբուժա-սանիտարական միջոցառումներ . 20

636
Հ-99
30 JUL 2010

ՀՐԱՀԱՆԳ

ՄՍՈՒՐԱՅԻՆ ՅԵՎ ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՈԶԵՐԻ ԾԻՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՄԱՏՂԱՇՆԵՐԻՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՈՒ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՐԱՏ՝ 1937 ՑԵՐԵՎԱՆ

17.06.2013

21.355

Инструкция

по организации опороса свиней в стойлово-пастбищный период, выращиванию и содержанию свиней

ՀՍՍՀ-ՍՍՀ Ա. Մեծնունի անվ. գրադարան

462
38

Կազմեցին և խմբագրեցին Մ. Սիմոնյան և Ն. Մալաթյան
Տեխն. խմբագիր և սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Գլավ. լիազոր № 1167
Հրատար. 415, տիրաժ 1500, պատվեր 307
Հանձնված է արտադրության 1937 թ. մարտի 27-ին
Ստորագրված է տպագրելու 1937 թ. ապրիլի 15-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11

ԽՈԶԱՆՈՑՆԵՐ

1. Խոզանոցը պետք է լինի չոր և լուսավոր։ Սա առաջին կարևորագույն պահանջն է, վորովհետև խոնավ և մութ խոզանոցը խոզերի համար չափազանց վտանգավոր է։ Խոզանոցում միջանցքների և կացոցների հատակը, ինչպես և պատերն ու առաստաղը, պետք է լինեն չոր և մաքուր։

2. Ծծմայր մերուների և խոճկորների խոզանոցը պետք է լինի տաք։ Այնտեղ պետք է լինի համաչափ ջերմաստիճան, անկախ դրսի ջերմաստիճանից։ Հատակից մեկ մետր բարձրության վրա տաքությունը պետք է լինի 10—12 աստիճան Ցելսիուսի։

3. Խոզանոցում ողը միշտ պետք է լինի

մաքուր և թարմ։ Տոթը և փչացած ոդը խոզանոցում թուլացնում և թունավորում է խոզերին։

Խոզանոցի ոդը թարմ և մաքուր պահպանելու համար պետք է շարունակ հսկել ոդափոխիչ խողովակների աշխատանքին և դրանք բաց անել ու փակել անհրաժեշտության դեպքում։ Բացի դրանից, խոզերին և խոճկորներին զբոսանքի հանելու ժամանակ պետք է ոդափոխել խոզանոցը՝ լուսամուտները կամ դռները բաց անելով։ Առանձնապես ոգտակար է բաց անել արեվահայաց լուսամուտները խաղաղ, պարզ յեղանակներին։

ԽՈԶԵՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ

4. Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ խոզերին մաքրել խոզանակով կամ վոլորած ծղոտով։ Խոզերի և խոճկորների վրա պարազիտներ (վոշիլներ) յերևան գալուց պետք է խոզերի մաշկին քսել նավթ, ոլեոնավթ, մազութ, վերամշակված աֆտոլ՝ նավթի հետ խառնած (մի մաս նավթին 10 մաս մազութ, ոլեոնավթ կամ անմշակ նավթ և այլն)։ Յեթե խոզերը վարակված են պարազիտներով շատ ուժեղ չափով, քսելը պետք է կրկնել յուրաքանչյուր 10—15 որը մեկ անգամ, վորովհետև այդ ժամանակամիջոցում խոզի մազերի վրա գտնվող պարազիտների ձվաներից դուրս են գալիս մանր վոշիլներ։

ԽՈԶԵՐԻ ՅԱՄՔԱՐԸ

5. Խոզերը պետք է ապահովված լինեն չոր ցամքարով. չոր, փափուկ և տաք կացոցը խոշոր նշանակություն ունի կենդանիների առողջության պահպանման և կերը մսատեսելու տեսակետից։ Թաց, խոնավ ցամքարի վրա և ցուրտ հատակին (բետոնից, քարից, ասֆալտից) պառկելը խոզերի համար շատ վնասակար է։ Ուստի անհրաժեշտ է սառը հատակ ունեցող կացոցների հատակը կիսով չափ ծածկել տախտակով։ Կացոցները մաքրելիս պետք է դուրս թափել միայն թաց և կեղտոտ ցամքարն ու գոմաղբը։ Հին չոր ցամքարը պետք է կողքերից հավաքել և նրան ավելացնել չոր թարմ ցամքար այնքան, վոր խոզի տակը լինի փափուկ և տաք։ Հիվանդություն առաջ գալու դեպքում պետք է ամբողջ ցամքարը փոխել։ Ծղոտը քիչ լինելու դեպքում դրանով առաջին հերթին պետք է ապահովել ծնելու մոտ և խոճկորներ ունեցող ծծմայր մերուններին։ Հղի և ցամաք մերուններին համար պետք է ոգտագործել այլ տեսակի ցամքար (տերև, տորֆ, յեղեգ, փայտի թեփ և այլն)։

1. ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԶՐՈՍԱՆՔԸ

Թարմ մաքուր ոդում, արեվի ճառագայթների տակ, նույնիսկ ձմեռ ժամանակ, իսկ առավել ևս ձմեռվա վերջերին, յերբ վրա յեն հասնում պայծառ արևոտ որերը, զբոսանքը մեծ նշանակություն ունի խոզերի առողջության ամրապնդման համար։

Առանց զբոսանքի հնարավոր չե մերուններից ամուր յեվ առողջ խոճկորներ ստանալ։

Զբոսանքի տևողությունը պետք է լինի կես ժամից մինչև 2 ժամ և ավելին՝ նայած յեղանակին։ Խոզանոցից զբոսանքի դուրս բերելու և խոզանոցը ներս տանելու ժամանակ, ինչպես նաև զբոսավայրում, պետք է պաշտպանել հղի խոզերին ամեն տեսակի հարվածներից, սայթաքելուց և այլ մեխանիկական վնասվածքներից։ Ճանապարհներն անանցանելի դառնալիս, յերբ բակերում (աղաներում) ցեխ է լինում, խոզերին պետք է ման ածել դաշտում, բարձր, ձյունից ազատված և չորացած տեղերում։ Սառած և սլկուն ճանապարհներով խոզերին չպետք է քշել։ Սմաոը թե խոզերին (հղի և ծծմայը) և թե խոճկորներին պետք է պահել արոտում։ Խոճկորներին արոտի պետք է սովորեցնել աստիճանաբար՝ սկսած 10 որական հասակից՝ դուրս թողնելով նրանց տաք ժամանակը, առաջին որերին 10—15 րոպեյից վոչ ավելի։ Խոզերի համար ամենալավ արոտն են հանդիսանում առվույտի, յերեքնուկի ցանքսերը, բայց հաջողությամբ կարող են ոգտագործվել նաև ուրիշ թիթեռնածաղկավոր բույսերի ցանքսերը, ինչպես և բնական արոտները։

2. ՀՂԻ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Կերակրելու ժամանակ պետք է խիստ հետևել, վոր մերուններին լինեն միջակ գիրություն, վոչ շատ ճարպակալած և վոչ էլ նիհար։ Ճարպակալած և նիհար մերուններին տալիս են թույլ խոճկորներ և նրանց վատ են կերակրում։

Հղի մերուններին կերաբաժինը պետք է բաղկացած լինի բազմատեսակ յեվ տնտեսության համար ամենամատչելի կերերից։

1. Ճիշտ կերակրման դեպքում կերաբաժնի անհրաժեշտ բաղադրիչ մասերը պետք է կազմեն թիթեռնածաղիկ բույսերի խոտերը (առվույտ, յերեքնուկ, վիկա՝ վարսակի հետ և այլն), կամ մարգագետնային լավ խոտերը, արմատապտուղներ և կարտոֆիլ, քիչ քանակով խտացրած կերեր (ջարդած հատիկ, մնացորդներ, ալյուրի փոշի, թեփեր, քուսպեր) և հանքային խառնուրդ։

Վորպեսզի խոզերը լավ ուտեն, անհրաժեշտ է խոտը (առվույտը, յերեքնուկը, վիկան) մանր աղալ — դարձնել ալյուր. այդ կարելի յե կատարել հատարակ յերկանքի միջոցով, միայն անհրաժեշտ է վոր խոտը չոր լինի։

2. Մերուններին հղիության առաջին 3 ամիսը նրանց կերաբաժինը կարող է կազմված լինել 70% կոպիտ և հյութալի կերերից և 30% խտացրած կերերից (ըստ կերի միավորների)։ 3 ամսից հետո կոպիտ կերի քանակն աստիճանաբար պակասեցվում է և ծնելուց 15 որ առաջ կոպիտ և հյութալի կերերի քանակը հասցվում է 25—50%-ի, իսկ խտացրած կերերի բաժինը հասցվում է 70—75%-ի։ Այդ ժամանակ կերաբաժինը պետք է կազմել այնպիսի կերերից, վորոնցով մերուններին պետք է կերակրվեն նաև ծնելուց հետո։

3. Հյութալի և կոպիտ կերերը տրվում են խտացրած կերերի հետ միասին, թանձր շլոթի ձևով (արմատապտուղները նախորոք կտրատում են, կարտոֆիլը յեփում են կամ խաշում)։

4. Լավ վորակի սիլոս կարելի յե տալ յուրաքանչյուր մերուններին որական 3—4 կիլոգր. ծնելուց մեկ ամիս առաջ և հետո պետք է սիլոսը հանել կերաբաժնից։

5. Չի կարելի մերուններին կերցնել նեխած և բորբոսնած կեր։

6. Հանքային նյութերը տրվում են հետևյալ խառնուրդի ձևով.

ա) աղացած կրաքար կամ կավիճ 8 մաս
կերակրի աղ . . . . . 2 »
բ) աղացած կրաքար կամ կավիճ . . 4 մաս
վոսկրի ալյուր (այրված վոսկոր) 4 »
կերակրի աղ . . . . . 2 »

Յուրաքանչյուր մերուններին այս կամ այն խառնուրդից կերերի հետ միասին որական տրվում է 30—40 գրամ։

Ծնելուց 2—3 որ առաջ մերուններին կերաբաժինը վորոշ չափով պակասեցվում է և նրանց տրվում է խտացրած կեր՝ ջրիկ վիճակում, քիչ քանակով (մանրացած արմատապտուղների հետ միասին։)

Ցրտահարված արմատապտուղները նախքան կերցնելը մանրացնում են և ապա յեփում կամ խաշում։

8) Հղի մերուններին պետք է կերակրել որական յերկու անգամ։

3. ԾՆՈՒՆԴՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

1. Ծնելուց 10—15 որ առաջ մերուններին տեղավորում են առանձին կացոցի մեջ, վորը

պետք է նախապես խնամքով մաքրված լինի։ Կացոցի պատերը և հատակը պետք է լվանալ յեռման ջրով՝ մոխրաջրի հետ միասին և սպիտակեցնել թարմ հանգած կրով։ Մերունին նույնպես փոխադրելուց առաջ պետք է մաքրել և սրբել — չորացնել կրեոլինի մեկ տոկոսային լուծույթի մեջ թաթախած շորով։ Յեթե մերունների վրա վոշիլ կա, այդ դեպքում փոխադրելուց առաջ նրանց պետք է մաքրել այդ պարազիտներից վերևում ցույց տրված ձևով։

2. Մերունի հետ պետք է վարվել մեղմ և սիրալիր, վորպեսզի նա ընտելանա և խնամողից չվախենա։ Կուրծը չմրսեցնելու համար անհրաժեշտ է, վոր մերունը պառկի չոր և փափուկ ցամքարի վրա։ Պետք է զննել մերունի պտուկներն ու կուրծը և բուժել ամեն տեսակի վերքերն ու քերծված տեղերը։

3. Ծնելուց առաջ պետք է հետևվել, վոր մերունները փորկապություն չունենան։

Յեթե մերունի կղկղանքը չափազանց պինդ է, պետք է նրան տալ լուծողական։ Ծնելուց 5—6 ժամ առաջ մերունին չպետք է կերակրել։ Այդ ժամանակ նրան պետք է տալ միայն խրմելու ջուր։

4. Ծնելուց 2—3 որ առաջ և 5 որ հետո անհրաժեշտ է խոզանոցում սահմանել ցերեկվա և գիշերվա հերթապահություն, ընդվորում հերթապահը պետք է ճանաչի այն բոլոր մերուններին, վորոնք այդ ժամանակամիջոցում պետք է ծնեն։

5. Ծնելու ժամանակ մերունը պետք է պառկի փափուկ և չոր ցամքարի վրա։ Ծնելուց հետո այդ ցամքարը փոխարինվում է թարմով։ Ծնված խոճկորներին խոզապահը վերցնում է մորից և սրբում չոր և մաքուր շորով, սկսելով գլխից։ Պորտը կտրելու համար չպետք է գործածել վորևե գործիք, այլ թողնել վոր նա ինքնաբերաբար կտրվի։ Ձեռք չտալ պորտին, այլ ախտահանելու համար զգուշությամբ սուզել մի բաժակ կրեոլինի լուծույթի մեջ։ Պորտն ինքնիրեն չկտրվելու դեպքում պետք է մաքուր ախտահանված մկրատով կտրել այն՝ փորից 4 - 5 սանտիմ. հեռավորության վրա և ծայրը սուզել մի բաժակ կրեոլինի լուծույթի մեջ։ Ընկերքը և սատկած խոճկորները պետք է դուրս տանել կացոցից և և վոչնչացնել։

Բոլոր ընդունված խոճկորներին տեղավորում են արկղի մեջ՝ չոր փափուկ ցամքարի վրա և վերևից ծածկում շորով այնպես, վոր արկղի մեջ մի փոքր անցք մնա թարմ ոդ անցնելու համար։

6. Ծննդաբերությունը վերջանալուց հետո, սակայն նրա սկզբից հաշված 2 ժամից վոչ ուշ, իսկ յեթե խոճկորները թույլ են, ապա ավելի շուտ, մոտավորապես ծնելուց մեկ ժամ հետո, խոճկորներին ծծեցնում են։ Յեթե խոճկորներն սկսում են լավ ծծել, ապա նրանց ամբողջ ժամանակ թողնում են մոր տակ, իսկ յեթե խոճկորները թույլ են, ապա նրանց հավաքում են արկղի մեջ և բաց են թողնում մոր մոտ յուրաքանչյուր 1—2 ժամից հետո՝ գիշեր յեվ ցերեկ։

Այսպես վարվում են մինչև խոճկորների ամրապնդվելը (2—3 որ)։

Առաջին անգամ ծծեցնելուց առաջ մոր կուրծն ու պտուկները լվանում են կրեոլինի մեկ տոկոսային գոլ լուծույթով։ Հատուկ ուշադրություն պիտի դարձնել այն բանի վրա, թե արդյոք բոլոր խոճկորներն ել լավ են ծծում են մորը։ Անհրաժեշտ է ոգնել թույլ խոճկորներին հասնելու պտկին և անպայման հետևել, վորպեսզի նրանք ծծեն կշտանալու չափ։ Մերունի տակ պետք է թողնել այնքան խոճկոր, վորքան մերունը լավ կաթ տվող պտուկ ունի։ Ավելորդ խոճկորներին պետք է գցել մոտավորապես նույն այդ շրջանում ծնած այլ մերունների տակ։ Ծնելու ժամանակ և նրանից հետո կացոցում մերունի մոտ պետք է լինի խմելու մաքուր ջուր։

4. ԾԾՄԱՅՐ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

1. Ծնելուց հետո առաջին մեկ-յերկու որը մերունին տալիս են քիչ կեր (0,75 կիլոգր. ցորենի թեփի և 0,75 կիլոգր. գարու այյուրի խառնուրդ) ջրիկ լափի ձևով։ Կերաբաժինն աստիճանաբար (որական 300—400 գրամ) շատացնում են և 5 կամ 6-րդ որը մերունին տալիս են լրիվ կերաբաժին՝ մշակված նորմաների համաձայն։

3. Ծծմայր մերունների կերաբաժինը պետք է կազմված լինի բազմազան կերերից։

Ծծմայր մերունի կերաբաժինը պետք է պարունակի.

ա) թիթեռնածաղիկ խոտ՝ 1—1½ կգ.

բ) խտացրած կերեր (ցորենի թեփ, հատիկների և հատիկային մնացորդների ջարդված, քուսպ).

գ) արմատապտուղներ՝ 4—6 կիլոգր., կամ լավ սիլոս՝ 1,5—2 կիլոգ.

դ) ծծմայր մերուններին տրվում է հանքային նյութերի նույն խառնուրդից, ինչ վոր հղի մերուններին, յուրաքանչյուր գլխին որական 30—40 գր։ Հանքային նյութերը տրվում են ուրիշ կերերի հետ խառնած, ինչպես նաև լցնում են ինքնամսուրների կամ կերատաշտակ-

ների մեջ, վորտեղից նրանք վերցնում են ուզածի չափ։

3. Ծծմայր մերուները միշտ պետք է ապահովված լինեն սենյակի բարեխառնություն ունեցող խմելու համար մաքուր ջրով։

Ջրի պակասության դեպքում զգալի չափով ընկնում է մերուների կաթնատվությունը, վորից տուժում են խոճկորները։

4. Խոճկորներին ծծից կտրելուց յերեք որ առաջ ծծմայր մերուների կերաբաժինը կիսով չափ պակսեցնում են և 6—7-րդ որվա ընթացքում մերուներին սկսում են կերակրել ցամաք մերուների նորմաներով։

5. Ծնելուց հետո 5-րդ որվանից ծծմայր մերուներն ամեն որ պետք է դուրս գան զբոսանքի—առանց խոճկորների՝ 1—2 ժամ տեվողությամբ, ինչպես նաև հղի մերուները։ Ծծմայր մերուներին պետք է զբոսանքի հանել որվա ամենալավ ժամանակը և նրանց հատկացնել հարմար աղալը։

5. ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ծնելու 3-րդ որվանից կացոցի կերակրման բաժանմունքում դրվում են փոքր տաշտեր՝ մաքուր ջրով և հանքային կերերով (աղացած կավիճ, մանրած ածուխ, այրված վոսկոր, մոխիր, մաքուր ճիմային հող, կարմիր կավ)։

Ջուրը պետք է միշտ մաքուր լինի։ Հանքային կերը և հողը նույնպես պետք է փոխել որական 2 անգամից վոչ պակաս։

2. 10—15 որական հասակից խոճկորներին սովորեցնում են հատիկային կերերի։ Դրա համար կացոցներում կամ կերակրելու բաժանմունքում մաքուր փոքր տաշտակի մեջ լցնում են բոված գարու, վարսակի, յեգիպտացորենի, տարեկանի հատիկներ, ջարդած վոլոռ։ Վորպեսզի խոճկորները հատիկ ուտել շուտ սովորեն, ոգտակար է հատիկների մի մասը, հատկապես վոլոռը թրջել աղաջրի մեջ։ Հենց վոր խոճկորներն սկսեն հատիկներ ուտել, այդ մոմենտից տաշտի մեջ յուրաքանչյուր որ քիչ-քիչ քանակով շաղ են տալիս զանազան հատիկներ, վողջ և ջարդած դրությամբ, տավուտի կամ յերեքնուկի տերևներ այնպես, վոր խոճկորները կարողանան միշտ ուտել այդ կերերը։ Վորքան խոճկորները շուտ սովորեն հատիկային կերերին, այնքան հեշտ և հաջող կընթանա նրանց աճեցումը։

3. Հենց վոր խոճկորներն սկսեն ուտել չոր հատիկային կեր, բայց վոչ ուշ, քան 15—20

որական հասակը, պետք է սկսել նրանց կերակրել շփոթով՝ պատրաստված ջարդած հատիկի և այլ խտացրած կերի խառնուրդից։ Շփոթը յեփվում է սովորական յեղանակով՝ ինչպես մարդկանց համար։ Վորքան լավ և համեղ է պատրաստված շփոթը, այնքան ավելի հաճույքով և շատ են ուտում խոճկորները և այնքան արագ է ընթանում նրանց աճումը։

Շփոթը տրվում է սառած կամ մի քիչ տաքացրած վիճակում, որական 3 անգամ՝ մանր տաշտերի մեջ։ Ամեն անգամ տաշտը թողնում են խոճկորների մոտ 30 րոպեյով, վորից հետո վերցնում են, իսկ շփոթի մնացորդներով կերակրում մերուններին, կամ ուրիշ ավելի մեծ՝ մորից կտրված խոճկորներին։

Պատրաստած շփոթը խոճկորներին տալուց առաջ շատ ոգտակար է, անգամ անհրաժեշտ, նրա մեջ ավելացնել թիթեռնածաղիկ խոտի ալյուր և քիչ քանակով մանրած թարմ գազար և յեփած ու ջարդված կարտոֆիլ, իսկ ամառ ժամանակ, գազարի ու կարտոֆլի փոխարեն, մանր կտրտած թարմ, հյութալի կանաչ-առվույտ, յերեքնուկ, յերիտասարդ յեղինջ և այլն։

4. Շփոթը պետք է պատրաստել հետևյալ խտացրած կերերի խառնուրդից.

462
38

Ջարդած վարսակ	3 մաս
» գարի	4 »
թեփ	1 »

թիթեռնածաղիկ խոտի ալյուր 1 մաս։

Մանրություն.—Շփոթի մեջ ավելացվում է թարմ մանրացված գազար և ջարդած յեփած կարտոֆիլ՝ հաշվելով խոճկորների յուրաքանչյուր 1 կիլոգրամ կենդանի քաշին որական 10 գրամ։

Գարնանը և ամառանը շփոթի մեջ ավելացնում են այդ նույն քանակությամբ կանաչ, իսկ այնուհետև յուրաքանչյուր որ այդ կանաչի քանակն ավելացնում են և յերբ խոճկորները սովորում են կանաչ ուտել, տալիս են ցանկացածին չափ։

Կանոնավոր կերակրման դեպքում յուրաքանչյուր խոճկորի համար պահանջվում է խտացրած կեր որական (գրամներով).

Խոճկորի հասակը	2-րդ 10-որյակ	3-րդ 10-որյակ	4-րդ 10-որյակ	5-րդ 10-որյակ	6-րդ 10-որյակ	7-րդ 10-որյակ
Զոր վիճակում կերակրելու համար	20	90	230	300	400	500
Շփոթի համար	15	50	120	280	290	350

5. Յեթե հնարավորություն կա խոճկորներին տալ քաշած կաթ, ապա այդ պետք է սկսել այն ժամանակ, յերբ նրանք արդեն սկսել են հատիկային կեր ուտել։ Յեթե կովերը

պալարախտով կամ ինֆեկցիոն վիժումով հիվանդ չեն, կաթը պետք է տալ միշտ թարմ, կամ լավ մակարդված մածնի ձևով։ Պետք է սկսել շատ փոքր քանակից՝ խիստ պահպանելով որական բաժինը։ Չափից ավելի կաթ տալն անթույլատրելի է։ Տաշտերը խոճկորների մոտ յերկար ժամանակ չպետք է թողնել, հատկապես այն դեպքում, յերբ տրվում է թարմ անարատ կաթ, այլ պետք է 10—15 րոպեյից հետո վերցնել։ Կաթի մնացորդով կերակրում են մերունին, իսկ տաշտերը մաքուր լվանում են և չորացնում արեվի տակ։ Խոճկորներին չի կարելի կերակրել այնպիսի կաթով, վոր սկսել է թթվել։

6. Խոճկորներին մորից կտրում են 2 ամսական հասակում։ Այդ պետք է կատարել աստիճանաբար՝ 3—5 որում։ Սկզբում անջատում են ամենից ուժեղ և մեծացած խոճկորներին, իսկ հետագայում, 5 որից հետո՝ ավելի թույլերին։ Մորից կտրելու ժամանակ խոճկորներին կերակրում են այնպիսի կերերով, վորոնցով նրանք կերակրվել են մորը ծծելու ժամանակ։ Անհրաժեշտ է մորից անջատելու առաջին տասնորյակում խոճկորներին տալ ամենից ավելի համեղ և սննդարար կերեր, վորպեսզի անջատումն անցնի սահուն կերպով և խոճկորների

տաճի վրա վատ չազդի։ Այդ ժամանակ խոճկորներին պետք է տալ քաշած կաթի կամ այլ կենդանական կերերի ուժեղ բաժիններ (մսոսկրային, ձկան, արյան ալյուր)։

6. ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ՊԱՀԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

1. 5—10 որական հասակից, նույնիսկ տարվա ցուրտ ժամանակ, լավ և հանգիստ յեղանակին պետք է խոճկորներին դուրս հանել բակը՝ զբոսանքի։ Խոճկորներին ցրտին պետք է սովորեցնել աստիճանաբար և զգուշությամբ։

Առաջին որերին խոճկորներին դուրս են հանում 5—10 րոպեյով, հետո աստիճանաբար զբոսանքի տեվողությունը յերկարացնում են, բայց այս դեպքում անհրաժեշտ է հետեվել, վորպեսզի խոճկորներն զբոսանքի ժամանակ շարունակ շարժման մեջ լինեն և վոչ թե անշարժ կանգնեն։ Հենց վոր խոճկորներն սկսեն մրսել, պետք է նրանց իսկույն ներս քշել խոզանոց։

2. Ամառը՝ շոգ որերին խոճկորներին յերկար չպետք է թողնել ուժեղ արեվի տակ, այլ նրանց պետք է պահել ստվերում—զով տեղում։ Խոճկորները խիստ զգասվում են տաքությունից և արեվի այրելուց։

3. Յեթե խոճկորներին ամառը պահում են

ազատ դրությամբ՝ ցանկապատած բակերում ծածկի տակ, ապա անհրաժեշտ է խիստ հետևվել, որ բակերը մաքուր լինեն։ Հենց որ բակերը կկեղտոտվեն, կառաջանա փոշի, փոսեր, պետք է խոճկորներին փոխադրել թարմ տեղ։

4. Խոճկորներին պետք է մաքրել և նրանց մարմինը ժամանակ-առ ժամանակ շփել բուսական յուղով, ճարպով և կրեոլինի մեկ տոկոսային լուծույթով ներծծված շորով։

5. Ծծից կտրած խոճկորների խմբավորման ժամանակ պետք է հետևվել, որ մեկ խմբի մեջ հավաքվեն միատեսակ հասակի, քաշի և զարգացման խոճկորներ։ Ավելի թույլ խոճկորներին (կամ ավելի ուժեղներին) պետք է առանձնացնել և տեղափոխել իրենց ուժին և զարգացմանը համապատասխան խոճկորների խմբի մեջ, որպեսզի կանոնավորվի բոլոր խոճկորների ճիշտ կերակրում

7. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Ինչպես խոզանոցում, նույնպես և նրա շուրջը պետք է պահպանել խիստ մաքրություն, դրա համար որպես կանոն՝

ա) խոզանոցները պետք է մաքրել ամեն որ՝ առավոտյան և յերեկոյան.

բ) կացոցի պատերը, միջապատերն ու առաստաղը ամեն ամիս պետք է կրով սպիտակացվեն.

գ) սպիտակացման ժամանակ մայրերին խոճկորների հետ դուրս են հանում զբոսնելու, իսկ վատ յեղանակներին սպիտակացումը պետք է կատարել հերթականությամբ, ընդ որում մայրերին խոճկորների հետ դուրս են հանում կամ միջանցք, կամ թե խոզերի «ճաշարան»։

2. Գոմաղբը թափելու համար պետք է հատկացված լինի խոզանոցից 30—40 մետր հեռու ընկած հատուկ ցանկապատած տեղ։

3. Վոչ մի դեպքում չի թույլատրվում՝ խոզանոցի շուրջը թափել գոմաղբ։

4. Պետք է ունենալ մշտական հսկողություն խոզանոցի շրջապատի մաքրության վրա։

5. Խոզանոցի շուրջը չպետք է լինի աղբ, թափթփուկներ, մարդկային արտաթորություններ, սատկած կենդանիների դիակներ։

6. Ֆերմայում աշխատող խոզապահների համար պետք է կառուցված լինի հատուկ զուգարան (արտաքնոց)։

7. Խոզանոցի առաջ և նրա շուրջը չպետք է լինեն անձրևաջրերի փոսեր։ Փոսեր գոյանա-

4092

լուծույթ՝ անասնաբուժի ցուցմունքով։ Ամեն անգամ խոզանոց մտնելուց առաջ մտնողն այդ տեղում պետք է ախտահանի իր կոշիկները, վորպեսզի վորևե հիվանդություն խոզանոց չբերի։

13. Մշտական հսկողություն պետք է լինի խոճկորների և մայրերի վրա։ Յուրաքանչյուր 10-նորյակում բոլոր խոզերը պետք է ընտրվեն անասնաբուժի կամ սանիտարի կողմից։

Խոճկորների անկման դեպքում անհրաժեշտ է անմիջապես հրավիրել անասնաբուժին։ Խոզաբուծական ֆերմաներում խոզերի մսուրային շրջանում կերակրելու և խնամելու, պահպանելու վերաբերյալ բոլոր միջոցառումները պետք է կատարվեն գործավարձով, համաձայն խոզաբուծական ֆերմաների աշխատանքի կազմակերպման վերաբերյալ մշակված կանոնադրության։

ՀՍՍՀ-ՍՍՌ Կա. Ա. Մռավյանի անվան Ազգային գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0301118

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

217

21. 355

ИНСТРУКЦИЯ

по организации опороса свиней в стойлово-пастбищный период, выращиванию и содержанию поросят

Сельхозгиз 1937 Ереванъ